ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՋՐՕՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՁՈՐԱՄԱՍՈՒՄ

Հունվարի 6-ին Հայ Առաքելական Եկեղեցին մեծ շուքով նշեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդն ու Աստվածհայտնությունը: Սրբազան տոնի կենարար օրհնությունը բաշխվեց նաև հայրենիքի պաշտպանությանը զինվորագրված հայորդիներին: Նույն օրը հայկական ամենամեծ զորամասերից մեկում՝ ԼՂՀ Պաշտպանության բանակի Չորրորդ պաշտպանական շրջանում, զորամասի հոգեւոր սպասավոր Գարիկ սարկավագ Ասրյանի նախաձեռնությամբ եւ գնդի հրամանատարության աջակցությամբ կատարվեց Ջրօրհնեքի արարողություն:

Արարողությունից առաջ Գարիկ սարկավագը գնդի սպայական եւ զինվորական անձնակազմին ներկայացրեց սրբազան տոնի խորհուրդը՝ կոչ անելով խորը հավատքով եւ ներքին պատրաստակամությամբ սեփական հոգիները ծննդավայր դարձնել Աստծո Միածին Որդու համար եւ օրհնված ջրի միջոցով մաքրագործվել հոգեւոր ախտերից ու մեղքերից:

Այնուհետեւ Արցախի թեմի հոգեւոր սպասավոր Տ. Հակոբ աբեղա Ապրեսյանը գնդի հոգեւոր սպասավորի եւ ԼՂՀ ՊԲ հոգեւոր սպասավորների ընդհանուր պատասխանատու Սամվել սարկավագ Մկրտչյանի հետ կատարեց Ջրօրհնեքի արարողությունը: Հընթացս արարողության զինվորյալ հայորդիներին մատուցվեց Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը՝ ուղղված համայն հայ ժողովրդին: Ապա ջուրն օրհնվեց ու բաշխվեց զինվորներին: Արարողությունից ոգեւորվել էին զինվորները, ակտիվորեն մոտենում էին եւ ստանում օրհնված ջրի իրենց բաժինը: Արարողությունը փակվեց Պահպանիչ աղոթքով:

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ ՀՆԴԿԱՀԱՅՔՈՒՄ

Հունվարի 6-ին Կալկաթայի Ս. Նազարեթ Մայր եկեղեցում մատուցվեց Սուրբ Պատարագ՝ ոգեկոչելու մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի հրաշազարդ Սուրբ Ծնունդը: Պատարագիչն էր հնդկահայոց հոգեւոր հովիվ Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանը: Հավարտ պատարագի կատարվեց ավանդական Ջրօրհնեքի կարգ:

Օրվա երկրորդ կեսին Ս. Նազարեթ եկեղեցու վարչության նախաձեռնությամբ Հայկական սպորտային ակումբում տեղի ունեցավ տոնական հանդիսություն:

Ավելի քան 200 հնդկահայերի շարքում էին նաեւ Հայոց Մարդասիրական ճեմարանի սաները եւ հայ ուսուցիչները: Երգ ու պարով համեմված հյուրասիրությունը եզրափակվեց Զմեռ Պապի այցելությամբ, որը ներկաներին բաշխեց Սուրբ Ծննդյան նվերները:

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ՉԻՆՍՈՒՐԱ (ՀՆԴԿԱՍՏԱՆ)

Հունվարի 10-ը Չինսուրայի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու ուխտի օրն էր:

Կալկաթայի հայ համայնքը, մասնակցությամբ ճեմարանի սաների եւ ուսուցիչների, ուխտի գնաց Կալկաթայից 65 կմ հեռավորությամբ գտնվող վերոհիշյալ եկեղեցին:

Հնդկաստանի Արեւմտյան Բենգալիա նահանգում գտնվող Չինսուրա (Չիչրա) բնակավայրը ժամանակին եղել է նշանավոր առեւտրային կենտրոն: 1695 թ. կառուցած Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին համարվում է Բենգալիայում կառուցված երկրորդ հնագույն քրիստոնեական եկեղեցին, իսկ Հնդկաստանի հայ գաղութի կանգուն եկեղեցիների շարքում՝ առաջինը: Եկեղեցու տարածքում գտնվող հնագույն գերեզմանատանը պահպանվել է հայատառ 180 գերեզմանաքար:

Կալկաթայի Ս. Նազարեթ Մայր եկեղեցում պահվող Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքը տարին մեկ անգամ է դուրս բերվում՝ ի նշանավորումն այս եկեղեցու Ուխտի օրվա:

Օրվա պատարագիչն էր հնդկահայոց հոգեւոր հովիվ Խորեն աբեղա Հովհաննիսյանը: Հընթացս պատարագի Հայր Խորենը Ս. Հովհաննես Մկրտչի Ոսկե Աջով օրհնեց ներկաներին եւ իր պատգամը փոխանցեց հավատացյալ հայորդիներին:

Ուխտագնացությունը հոգեւոր վերանորոգության եւ վերազարթոնքի առիթ եղավ հնդկահայերի համար:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում հունվարի 25-ին տեղի ունեցավ էկումենիկ աղոթքի արարողություն: Աղոթքին մասնակցում էին Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Հարավային Կովկասի աշխարհակազմի ղեկավար Ջուզեպպե Պազոտոն, Վրաստանում Ավետարանական Մկրտական Եկեղեցու առաջնորդ Մերաբ Գափրինդաշվիլին եւ Վրաստանում Գերմանական Լյութերական Եկեղեցու եպիսկոպոս Խանս Յոխանսոն Կիդերլենը:

Վրաստանում էկումենիկ աղոթքի ավանդությունը սկսվել է երկրի անկախա-

ցումից ի վեր, որը տարին մեկ անգամ տեղի է ունենում նշված եկեղեցիներից որեւէ մեկում:

Միասնական աղոթքը սկսվեց «Հայր մերի» երգեցողությամբ, ապա ներկաներին Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի անունից ողջունեց Տ. Նարեկ քահանա Ղուշչյանը: Իրենց ողջույնները հավատացյալ ժողովրդին ուղղեցին նաեւ մասնակից Եկեղեցիների առաջնորդները:

Էկումենիկ աղոթքի ընթացքում հոգեւոր երգեր կատարվեցին Վիրահայոց թեմի Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու, Սուրբ Մարիամի Հարության եկեղեցու, Ավետարանական Մկրտական կենտրոնական եկեղեցու եւ Գերմանական Լյութերական Մայր եկեղեցու երգչախմբերը:

Ինչպես եկեղեցու հոգեւոր սպասավորների աղոթքները, այնպես էլ երգչախմբերի բազմալեզու եւ բազմերանգ երգեցողությունը մեծ տպավորություն գործեցին ներկա հայազգի եւ այլազգի հավատացյալների վրա:

Օրվա բնաբանով՝ «Եւ այս բաների վկաներն էք դուք» (Ղուկաս ԻԴ 48), եկեղեցում ներկա բազմերամ ժողովրդին հոգեւոր պատգամով դիմեց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Էկումենիկ աղոթքին ներկա էին Վրաստանի պաշտոնական անձինք, օտարերկրյա դիվանագետներ:

Էկումենիկ աղոթքը ավարտվեց Հայ Եկեղեցու հոգեւոր սպասավորների «Պահպանիչ» աղոթքով:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ավարտվեցին 2006 թվականի օգոստոս ամսից Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու վերականգնման եւ վերանորոգության աշխատանքները: Շինվերանորոգչական աշխատանքները կարելի է իսկապես բնութագրել փրկչական, քանի որ փլուզման եզրին հասած Աստծու այս հրաշալի տաճարը չկիսեց Թբիլիսիի Շամխորեցոց Սուրբ Աստվածածին /փլված 1989 թ./ եւ Մուղնեցոց Սուրբ Գեւորգ /փլված 2009 թ./ եկեղեցիների ճակատագիրը: 2005 թվականին Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը, թեմական առաջնորդից տեղեկանալով եկեղեցու վթարային վիճակի մասին, անմիջականորեն ձեռնամուխ եղավ միջոցների հայթայթման ու եկեղեցու վերանորոգության հիմնահարցերի լուծմանը: Հայ Եկեղեցու ԱՄՆ Արեւմտյան թեմի բարեպաշտ հայության աջակցությամբ եւ Մայր Աթոռի հովանավորությամբ ու անմիջական հսկողությամբ սկսվեցին շինարարական աշխատանքները: Այն պատշաճ մակարդակով եւ պատասխանատվությամբ իրականացրեց վրացական «Մգվիմե» շինարարական ընկերությունը: Եկեղեցու վերանորոգության նախագծանախահաշվային աշխատանքները կատարվեցին «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով եւ Արգենտինայի հայ համայնքի օժանդակությամբ:

1805 թվականից վաղարշապատցի վարպետ-շինարարների կողմից Հավլաբարի հայաշատ թաղամասի սրտում կառուցված եկեղեցին վերանորոգվել է բազմիցս: Այն իր դռները բաց է պահել ոչ միայն խորհրդային եկեղեցահալած տարիներին, նույնիսկ 1944 թվականին ենթարկվել է նորոգության: Սակայն հետազոտությունները ցույց տվեցին, որ անհրաժեշտ է երկաթ-բետոնով ամրացնել հիմքերը եւ եկեղեցու չորս սյուներն ու ողջ կառույցը:

2006 թվականի շինվերանորոգչական աշխատանքներն սկսելուց առաջ Թբիլիսիի հավատացյալ հայորդիները, թափոր կազմած, շարականների եւ սաղմոսների երգակցությամբ, հավաքվեցին Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցու բակում, որտեղ կատարվեց մատաղի օրհնության կարգ:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի օրհնությամբ Սուրբ Ծննդյան տոնին օծվեց վեմքար, որի վրա բազմաթիվ հավատացյալների եւ հյուրերի ներկայությամբ մատուցվեց Սուրբ Պատարագ:

Պատարագիչ առաջնորդ Սրբազան Հայրը հանուն վիրահայ հավատացյալների, երախտագիտություն հայտնեց Վեհափառ Հայրապետին եւ մաղթեց համերամ տարիներ հովվական սրբազան առաքելության արդյունաշատ տարիներ: Առաջնորդ սրբազանը շնորհակալություն հայտնեց նվիրական այս գործին մասնակցած բոլոր հայորդիներին ու շինարարներին: Հավարտ Սուրբ Պատարագի կատարվեց Ջրօրհնեքի արարողություն եւ օրհնվեց ավանդական մատաղը:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ